

րաւ չըմբռնուիր թէ ինչ պատճառաւ այս մասնակցական ձևութիւնը աւելի կատարեալ առաձգութիւն տայ քան զոր առաջ ունէր նոյն մետաղը : Հետեանքը ասով ալ քաջքշած կ'երևայ , որ այդ բացատրութիւնն ընդունելով կը հետեի թէ ջուր տալը , որ մասնակցական բանաբար իրարմէ հեռանալն է , ու կռանելը , որ ընդ հակառակն նոյն մասնակցականը իրարու կը մօտեցնէ , մի և նոյն ազդեցութիւնը կ'ընեն : Այնպէս նոր դժուարութիւն մըն ալ այն է՝ որ ջուր տալը ներհակ ազդեցութիւն կ'ընէ պղնձի ու անագի մետաղական բազաղրութեանը վրայ , որով որ ծնծղաները կը շինեն : Տարսէ բնաբանը դիտած է թէ այս բազաղրութիւնը կասկարմիր տաքցընելու որ ըլլաս ու մէկէն պաղ ջրոյ մէջ խոթես , շատ կակուղ կ'ըլլայ ու բանելու շատ դիւրին . իսկ ընդ հակառակն թէ որ օդուն մէջ թողուս որ ինքիրենը կամաց կամաց պաղի՝ դիւրաբեկ կ'ըլլայ ու անկռանելի , որով և սաստիկ ու կարճ առաձգութիւն կ'ունենայ :

Առաձգութիւնը թէ հաստատուն և թէ հեղանիւթ մարմիններու ալ յատուկ է . հեղանիւթները գնտակիկներ որ դառնան՝ այն ատենը առաձգական

յատկութիւննին կ'երևայ : ( ) րինակի համար՝ թէ որ սնդիկի գնտակիկ մը հորիզոնական մակերևութի մը վրայ դրուած ըլլայ , ու մէկը գնտակիկ ճնշելու զէ , կը տեսնէ որ մէկէն ձևը կը փոխէ ու կը տափկի . բայց ճնշումն որ գաղբի , մէկէն 'ի մէկ իր գնտական ձևը կ'առնէ : Այնպէս թէ որ հեղանիւթի գնտակիկ մը հաստատուն մարմնոյ մը զարնուի՝ մասնաւոր ուժով մը ետ կը ցատքէ , որ սնդիկով դիւրին է փորձելը : Այնպէս առաձգական նշաններ կը տեսնենք ջրին ցայտելուն վրայ՝ թէ որ քիչ մը զառիվայր մակարդակի մը վրայ որ իյնայ :

Ճնշականութեան գլխոյն մէջը տեսնաք որ բնաբանք ջուրը և ուրիշ հեղանիւթներ կրցեր են ճնշել , անանկ որ աւելի պզտիկ միջոցի մէջ սղմեցուցեր են , և երբոր ճնշող զօրութիւնը վրանէն ելեր է , հեղանիւթները մէկէն 'ի մէկ իրենց առջի ընդարձակութիւնը առեր են իրենց առաձգական ուժովը : Հեղանիւթներուն առաձգականութեանը ուրիշ փորձ մըն ալ ասիկայ է՝ որ ձայնը մէջերնէն կրնայ անցնիլ . վասն զի միայն առաձգական մարմիններն այս յատկութիւնը ունին :

Մ Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԱՆԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ի՞նչ քաղաք է Լոնտրա :

— Անգղոյ պետութեան մայրաքաղաքն է , ու աշխարհքի մը կը նմանի իր մեծութեամբը , և գուռ ու պարիսպ չունենալուն՝ որ օրուան վրայ կ'ընդարձակի ու կը տարածի . բնակիչն է 2,360,000էն աւելի : Իտալոյ պէս գեղեցիկ շէնքեր չունի , որովհետեւ այն փափուկ ու գեղարուեստից գեղեցիկութիւնը լաւ ըմբռնող արտօժակը այնչափ չկայ հոն . բայց գարծեալ իր երևելի շէնքերուն մէջ նշանաւոր է Ս . Պօղոսի գեղեցիկ ու հոյակապ եկեղեցին , ինչպէս նաև Ուեստմինսթը հռչակաւոր արքայարանը , որ գոթացի ճարտարապետութեամբ շինուած է . իբրև մեծագործութեան օրինակ շատ երևելի է Գըննէլ ըսուած Գամիդ գեպին տակը շինուած մեծ ճամբան . տանց գալով զարմանալի է անոնց մաքրութիւնն ու կարգաւոր

րութիւնը : Իսկ ուսումնական և տպագրութեան յառաջագիմութեան կողմանէ՝ 1,750 հասարակաց ու առանձնականաց գարոցներ ունի , 350 տպարան , և գրալաճառներուն թիւը՝ արուարձանացն ալ մէկտեղ առնելով 1,200ի կ'ելլէ : Լոնտրայի վաճառականութիւնը այնչափ մեծ է , որ միայն իրմէն ելած վաճառքները հաւասար են Գաղղոյ պէս ծաղկեալ ու յառաջագէմ տէրութեան մը բոլոր վաճառքներուն , և ամէն տեղ վաճառակցութիւն ունի : Վաճառականութեան երևելիութեանէն յայտնի է որ ճարտարութիւնն ալ վերջի աստիճանի ծաղկած պիտի ըլլայ . Լոնտրայի մէջ գլխաւոր շինուածներն են մետաքսեղէն , ասուղէն , բամբակեղէն , հնդկային կերպաս , խաբտոց , սուկ . ժամացոյց , սրղպատէ , երկաթէ ու անագէ գործիքներ , գանակ , գլխարկ , յախճապակի , հայլի , կառք , թամբ , կահարասիք , գորգեր , զարգագործ թղթեր , քողի համար և ուրիշ կտաւներ . հրազէնք , վերաբուժութեան , չափաբանութեան ,

ընաբանութեան ու աստղաբաշխութեան գործիքներ . քայտի , օճառ , օւլայ<sup>1</sup> , և այլն : — Լոնտրա մայրաքաղաքը մեզի հետ այս վերաբերութիւնն ունի , որ մեր վերջին Լեոն 2 Ռուբինեանց թագաւորը ատեն մը հոս բնակեցաւ :

**ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ**

**Անահիայի Շիրակունոյ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման :**

Հարցում 2. — Հազար կայր 'ի մի պարտիզի , և Հոռոմ մի եմուտ 'ի պատճառ զքօսանաց , և եկեր զհինգ , և զհինգետասաներորդ մասն հազարոյն . և իմացեալ իմ զորկորէութիւն առն՝ հանի զնա արտաքս . և մտեալ համարեցի զնա , և գտի ունջ հարիւր և տասն : — Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի ունջ լեալ է հազարն , և կամ քանի ունջ կերեալ է Հոռոմին :

Լուծում . — Լիցին 110 ունջ հազարոյն = \* , և բովանդակ հազարն = + . յորմէ հինգերորդ մասն նորին լինի  $\frac{+}{5}$  , և հինգետասաներորդ մասն նորին՝  $\frac{+}{15}$  , որք միանգամայն ընդ 110 = \* ունջս հազարոյն պարտին հաւասար գոլ բովանդակ հազարոյն :

Վասն որոյ  $\frac{+}{5} + \frac{+}{15} + * = +$  .

և ջնջեալ զկոտորական մի առ մի բազմապատկելով զամենայն մասունս հաւասարմանն 'ի ձեռն հասարակաց յարանուանողին 15 , գտանեմք

$3 + + + + 15 * = 15 +$  ,

զոր վերածեալ և փոխադրեալ գտանեմք

$15 * = 11 +$  ,

և բաժանեալ 'ի 11

$\frac{15}{11} * = +$  :

Արդ որովհետև ըստ ենթադրութեանս է \* = 110 , ապա  $150 = 110 \times \frac{15}{11} = 10 \times 15 = \frac{15}{11} *$  , և  $+ = \frac{15}{11} * = 110 \times \frac{15}{11} = 10 \times 15 = 150$  . և այս արտադրեալ ցուցանէ թէ լեալ էր ունջ հազարոյն հարիւր յիսուն , յորոց քառասուն ունջ կերեալ է Հոռոմին . որ և է համեմատ ամենայն հանգամանաց առաջի եգեալ հարցմանս :

Արդ արդարեւ . — Ըստ հանգամանաց հարցմանս է

$\frac{+}{5} + \frac{+}{15} + * = +$  .

<sup>1</sup> ՏՃ . Նիւաթի :

արդ փոխանակելով զ+ ընդ 150ից որ է ունջ հազարոյն , գտանեմք լեալ հինգերորդ մասն նորին

$\frac{+}{5} = \frac{150}{5} = 30$

հնգետասաներորդ մասն նորին

$\frac{+}{15} = \frac{150}{15} = 10$

որք միանգամայն ընդ մնացեալսն

110

առնեն ունջ

150

**ՆԿԱՐԱԳԻՐ**

ԸՂԷՂ ԼՈՆԵՅՈՂ ՆԱԳԻՐՈՍ :

Պարոն խաչատուրին ըզեղը օր օրուան վրայ փոռուն պէս կը կերակրուի : Երէկ ակնջէն մտածը լեզուէն դուրս տուաւ . ու իրիկուան դէմ՝ ներսը պաս պարապ էր մնացեր : Աս առտու խանութին մէկը կը մտնէ , կը հարցնէ . « Հոգիդ սիրես՝ ըսէ ինչ նոր բան կայ » : Լսեց մի . կ'երթայ մէկէն անդին բոլորն ալ դուրս կը պարպէ կը լմնցնէ : Սպունդի պէս կեանք մըն է անցուցածը . հոս կը ծծէ , հոն կը սիմէ : Նայիս մէկուան զգեստէն բռնիւր կ'աղաչէ որ իրեն բան մը պատմէ . անդին մեկալին ալ՝ որ իր պատմածը մտիկ ընէ : Շատ անգամ կ'ըլլայ որ բուն անկէց կը լսէ՝ որուն որ քիչ մը առաջ ինքն էր պատմած . կը սկսի պատմութեան վրայ սրբագրութիւններ ընել , « Օ՛ , փոխուեր է փոխուեր է » , կանչելով . չէ թէ իրք փոխուելուն՝ հապա միայն ինտալու համար : Թէ որ տեսնէ որ երկու հոգի անկիւն մը քաշուած նամակ մը բռներ կը կարգան՝ սիրտը կը ճաթի . կ'ուզէ որ ինչ գրած ըլլալը իմանայ : Թէ որ իր ճանչուորներն են ատոնք , մէկէն շիտակ քովերին կը անկուի . իսկ թէ որ չեն՝ կ'ընէ ջըներ բան մը կը գտնայ որ քովերին մտնեայ : Տեսա՛ւ մի որ անդին երկու հոգի ականջէ ականջ կը փսփսան՝ խեղք միտքը բոլոր հոն կ'երթայ . քովի իրեն հետ խօսողին ձայնը ալ և ոչ իսկ ականջը կը հասնի : Ամէն մէկ աչքի շարժուածքին , քթի խաղալուն մեկնութիւնը կու տայ . ու թէ որ ուրիշ բան ձեռքէն չգայ՝ կ'ելլայ անոնցմէ պատմութիւն մը կը շինէ ու դուրս կը հանէ , և լսածի մը պէս ալ կը պատմէ : Աս Պ . խաչատուր ըսածնիս բժիշկի սրուակ<sup>1</sup> մըն է . թէ որ ուրիշով մը չէցուի նէ՛ պարապ կը մնայ :

ԿՈՄԾԻ

<sup>1</sup> ՏՃ . Հաճո՛մալ շիշկի . գոնիւր :